# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԱՎԵՐԱՑՐԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական օրհնության գրով վավերացրեց Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանի վերընտրությունը Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդի պաշտոնում:

Դեռեւս հունիսի 27-ին Թեմական պատգամավորական ժողովը վերընտրել էր Գարեգին Սրբազանին՝ իբրեւ Գերմանիայի Հայոց առաջնորդ՝ առաջիկա յոթ տարիների համար:

Նորին Սրբությունը, շնորհավորելով ընտրության առիթով, հայցում է Բարձրյալ Տիրոջ Ս. Աջի հովանին եւ զորակցությունը Գարեգին Սրբազանին, որպեսզի հոգեւոր նույն նախանձախնդրությամբ շարունակի Առաջնորդական իր առաքելությունը՝ ի պայծառություն Գերմանիայի հայոց Թեմի եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը՝ Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի նախագահ Սերժ Լագոշի գլխավորությամբ:

Ողջունելով պատգամավորական բարեկամության խմբի նախագահին, կարեւորելով նրա առաջին այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ եւ սերտ եղբայրական կապերին: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց հայորդիների հանդեպ Ֆրանսիայի իշխանությունների կողմից ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար, որի ականատեսն էր եղել հովվապետական իր այցերի ժամանակ:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը հյուրերին ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Ֆրանսիայի իշխանությունների միջեւ առկա գործակցությունը, որի օրինակներից մեկը Մայր Աթոռի տարածքում գործող բարեգործական մանկական ապաստանարումարանն է: Խոսքի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջողություն մաղթեց ֆրանսիացի պատգամավորներին հայ-ֆրանսիական բարեկամության առավել ամրապնդման գործում:

Իր հերթին պրն. Լագոշը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար Վեհափառ Հայրապետին փոխանցեց պարգամավորական բարեկամության խմբի անդամների ողջույններն ու հարգանքը: Խմբի նախագահն անդրադարձավ նաև հայ ժողովրդի կապվածությանը Հայոց Եկեղեցուն, ինչը լավագույնս նկատելի է ֆրանսահայ համայնքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման և դատապարտման կարևորության մասին, որպեսզի մարդկային կյանքում այլևս տեղ չգտնեն և կանխարգելվեն նման երևույթները: Անդրադարձ կատարվեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին և ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի կարևոր մասնակցությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ԺՈՒԿՈՎԻՆ

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսանդր Ժուկովի գլխավորած պատվիրակությանը` ուղեկցությամբ ՀՀ Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի:

Ողջունելով ՌԴ փոխվարչապետին և կարևորելով նրա այցն ամենայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին` Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկկողմ հարաբերությունների առավել սերտացման և նորանոր ոլորտներում ձևավորվող համագործակցության առիթով, հաջողություն մաղթեց Ա. Ժուկովի առաքելությանը Հայաստանում:

Վեհափառ Հայրապետը նաև գնահատանքով անդրադարձավ ՌԴ իշխանությունների` ռուսաստանաբնակ հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքին, ինչպես նաև հայորդիների բերած կարևոր ներդրմանը երկրի` տնտեսական և մշակութային կյանքում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամությանը, Հայ և Ռուս Եկեղեցիների ջերմ հարաբերություններին և հոգևոր առաքելության իրագործմանն երկու ժողովուրդների կյանքում:

Հանդիպմանը ներկա էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ